ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/5-2»

ք. Երևան «21» «հունիսի» 2016թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Գ.Գրիգորյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Գասպարյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ 358+025 հատվածում կամուրջի կառուցման շինարարական աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված 2016 թվականին իրականացվելիք Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30.10.2016թ., իսկ ընդհանուր աշխատանքների մնացած մասը պետք է կատարվեն դրանց համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 280 օրացուցային օրվա ընթացքում:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով

թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 (երեք) տարին: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի ժամկետ է սահմանվում 3 տարին:

3.4.11 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (Հավելված N 4) ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 40 (քառասուն) օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 144 629 802 (մեկ հարյուր քառասունչորս միլիոն վեց հարյուր քսանինը հազար ութ հարյուր երկու) ՀՀ դրամ, որից 24 104 967 (քսանչորս միլիոն մեկ հարյուր չորս հազար ինը հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն, ընդ որում 2016 թվականին իրականացվելիք աշխատանքների գինը կազմում է 99 893 880 (իննսունինը միլիոն ութ հարյուր իննսուներեք հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, որից 19 978 776 (տասնինը միլիոն ինը հարյուր յոթանասունութ հազար յոթ հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Պայմանագրով նախատեսված ընդհանուր աշխատանքների մնացած մասը կկատարվեն դրանց համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր (կողմերի միջև փոխադարձ համաձայնեցված կարգով վերոհիշյալ համաձայնագրով կարող է նախատեսվել կանխավճար):

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: 2016 թվականին կատարված աշխատանքների մասով դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, իսկ ընդհանուր աշխատանքների մնացած մասի կատարման մասով դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե

արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները,

հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն 2016 թվականին իրականացվելիք աշխատանքների մասով ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, իսկ ընդհանուր աշխատանքների մնացած մասի կատարման մասով՝ ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման և պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը կլուծարվի, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի ընդհանուր աշխատանքների կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվի:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի

օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.7 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.9 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, կազմված 13 էջից, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.10 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
ք.Երևան, Նալբանդյան 28	ՀՀ Սյունիքի մարզ, ք.Մեղրի, Գործարանային 89
Կենտրոնական գանձապետարան	«Արդշինբանկ» ՓԲԸ, Մեղրի մասնաճյուղ
Հ/Հ 900011005767	Հ/Հ 24702000016540000
ՀԿՀՀ 02865518	ՀԿՀՀ 09700228
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
«02» «հունիսի» 2016թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ N «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/5-2» գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ
Մ-2, Երևան - Երասխ - Գորիս - Մեղրի - Իրանի սահման
կմ 358 + 025 հատվածում կամուրջի կառուցման աշխատանքների (ընդհանուր)

ՀՀ դրամ

Հ/հ	Աշխատանքների անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի գինը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
1.Հողային աշխատանքներ					
1	10ɜV կարգի բնահողի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ հեռ. վրա, լիցք	մ³	60	959	57,540
2	Նույնը 100մ հեռավորության վրա, լիցք (10ɜV)	մ³	164	1711	280,604
3	Ա/բ ծածկի քանդում և տեղափոխում բուլդոզերով 20մ կուտակման նպատակով, բարձում էքս.-ով ա/ի վրա, տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	64	2787	178,368
4	Լիցքի կառուցումը (հարթում,ջրում և խտացում)	մ³	224	793	177,632
5	9դ-V կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով երբ շերտի հզորությունը h=0.5 մ	մ³	55	5,510	303,050
6	20a-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով երբ շերտի հզորությունը h=0.5մ	մ³	410	6,740	2,763,400
7	20б-VIII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով, երբ շերտի հզորությունը h=0.5մ	մ³	260	11,592	3,013,920
8	20a-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ³	969	2,472	2,395,368
9	20б-VIII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ³	619	3,194	1,977,086
10	Նախապես փխրեցված 9դ-V կարգի բնահողի տեղափոխում բուլդոզերով 50մ հեռ. վրա, Լիցք	մ³	75	960	72,000
11	Նախապես փխրեցված 9դ-V և 20a-VII կարգի բնահողերի մշակում և տեղափոխում բուլդոզերով 100մ հեռ. վրա, լիցք (35մ³+338մ³)	մ³	373	1,711	638,203
12	Նախապես փխրեցված 20a-VII կարգի բնահողի բարձում էքս.-ով ա/ի վրա և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	831	2,693	2,237,883
13	Նախապես փխրեցված 20б-VIII կարգի բնահողի բարձում էքս.-ով ա/ի վրա և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	700	2,735	1,914,500
14	Նախապես փխրեցված 20a-VII կարգի բնահողի մշակում և տեղափոխում բուլդոզերով 20մ կուտակման նպատակով բարձում էքս.-ով ա/ի վրա և տեղափոխում լցակույտ 2.0կմ	մ³	210	3,201	672,210
15	Նույնը 20б-VIII կարգի բնահողում	մ³	179	3,244	580,676
16	Լիցքի կառուցում (հարթում, ջրում, խտացում)	մ³	540	562	303,480
				Ընդամենը 1.	**17,565,920**
2. Հողային առուներ					
1	9դ-V կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h = 0.5մ	մ³	5	5,510	27,550
2	20a-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h = 0.5մ	մ³	13	6,740	87,620
3	20б-VIII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h= 0.5մ	մ³	20	11,592	231,840
4	Նախապես փխրեցված 9դ-V կարգի բնահողի բարձում էքս.-ով ա/ի վրա և տեղափոխում լցակույտ 1կմ հեռ. վրա	մ³	10	2,209	22,090

5	Նախապես փխրեցված 20a-VII կարգի բնահողի բարձում էքս.-ով ա/ի վրա և տեղափոխում լցակույտ 1կմ հեռ. վրա	մ³	13	2,457	31,941
6	Նախապես փխրեցված 20б-VIII կարգի բնահողի բարձում էքս.-ով ա/ի վրա և տեղափոխում լցակույտ 1կմ հեռ. վրա	մ³	20	2,453	49,060
				Ընդամենը 2.	**450,101**
3. Կողնակների իրականացում					
1	6г IV կարգի բնահողի պահուստում մշակում բարձում էքս.-ով ա/ի վրա և տեղափոխում 10կմ հեռ.-ից կողնակի լիցքի համար	մ³	120.64	3,377	407,401
				Ընդամենը 3.	**407,401**
4.Իջատեղերի կառուցում					
1	10зV կարգի բնահողի մշակում և բարձում էքս.-ով ա/ի վրա և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	9.98	2,238	22,335
2	Խճային հիմքի իրականացում h=12սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ²	մ²	62.36	3,010	187,704
3	Ծածկի իրականացում մանրահատիկ ա/բետոնով h=4սմ	մ²	62.36	5,240	326,766
				Ընդամենը 4.	**536,805**
5.Երթևեկելի մաս					
1	Ավազակոպճային հիմքի իրականացում h=10սմ	մ²	1,924	535	1,029,340
2	Խճային հիմքի իրականացում h=16սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ²	մ²	1,340	3,523	4,720,820
3	Ծածկի ներքին շերտի իրականացում խոշորահատիկ ա/բետոնե խառնուրդով h= 6սմ	մ²	1,299	7,657	9,946,443
4	Ծածկի վերին շերտի իրականացում մանրահատիկ ա/բետոնե խառնուրդով h= 4սմ	մ²	1,299	5,240	6,806,760
				Ընդամենը 5.	**22,503,363**
6. Անվտանգության էլեմենտներ					
1	Նոր մետաղական արգելափակոցների տեղադրում	գծմ	152	23,959	3,641,768
2	Գոյություն ունեցող ճան. նշանների ապամոնտաժում	հատ	2	4,514	9,028
3	Նոր նշանների տեղադրում	հատ	7	47,938	335,566
4	Ազդանշանային սյունների տեղադրում	հատ	8	17,198	137,584
5	Պատվածքի գծանշում	մ²	31.897	1,597	50,940
				Ընդամենը 6.	**4,174,886**
7.Կամրջային անցում					
I.Նախապատրաստական աշխատանքներ					
1	Շին-մոնտաժային աշխատանքներ իրականացնելու ընթացքում տրանսպորտային միջոցների երթևեկությունը կարգավորող ճան. նշանների պատրաստում և տեղադրում՝ հետագա կազմատումով	հատ	12	39,769	477,228
II. Հենարաններ					
1	Հիմքի կառուցման համար փոսորակի փորում 10з-V կարգի բնահողում էքս.-ով հետագա բնահողի տեղափոխում 25մ հեռավորության վրա բուլդոզերով՝ կցորդման հողային պաստառի համար՝ (N1 հենարան)	մ³	62	5,420	336,040
2	9д-V կարգի բնահողի նախապես փխրեցում պայթանցքային լիցքերով h=0,5մ (50%) հետագայում (46%) բնահողի տեղափոխում բուլդոզերով 25մ հեռավորության վրա կցորդման հողային պաստառի համար՝ (N1 հենարան)	մ³	196.4	2,498	490,607
3	Փոսորակի վերջնակազմատման հողային աշխատանքներ 9д-V կարգի բնահողում, ձեռքի կույտավորումով և կրկնակի գցումով՝ (N1 հենարան)	մ³	34.6	31,197	1,079,416

4	Փոսորակի փորման համար նախապես 20a-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=0,5մ հետագայում (46%) բնահողի տեղափոխում բուլդոզերով 25 հեռավորության վրա կցորդման հողային պաստառի համար՝ (N2 հենարան)	մ³	275.1	6,441	1,771,919
5	Փոսորակի վերջնակազմատման համար նախապես 206-VIII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=0,5մ, ձեռքի կույտավորումով և կրկնակի զցումով՝(N2հենարան)	մ³	47.7	39,776	1,897,315
6	N1 հենարանի հիմքի միաձույլ բետոն B20, հիմքի ներբանի ամրանային ցանցով	մ³	49.86	101,999	5,085,670
7	N2 հենարանի հիմքի միաձույլ բետոն B20, հիմքի ներբանի ամրանային ցանցով	մ³	43.32	97,772	4,235,483
8	N1 հենարանի իրանի միաձույլ բետոն B20, հիմքի ներբանի ամրանային ցանցով	մ³	106.41	97,931	10,420,838
9	N2 հենարանի իրանի միաձույլ բետոն B20, հիմքի ներբանի ամրանային ցանցով	մ³	79.80	97,922	7,814,176
10	Ֆերմատակերի միաձույլ ե/բետոն B25	մ³	21.9	138,330	3,029,427
11	Պահարանային պատերի միաձույլ ե/բետոն B25	մ³	19.04	156,270	2,975,381
12	Հենարանային պատվանդանների միաձույլ ե/բետոն B25	մ³	1.76	162,044	285,197
13	Ամրանային ձողեր անցումային սալերի ֆիկսացիայի համար	տն	0.0702	947,030	66,482
14	Խճային բարձիկներ տապաստի բլոկների տակ h=0,4մ	մ³	20.22	8,613	174,155
15	Հավաքովի ե/բետոնե Л-3 տիպի տապաստի բլոկներ B25	հատ	4	370,459	1,481,836
16	Հավաքովի ե/բետոնե Л-5 տիպի տապաստի բլոկներ B25	հատ	2	411,839	823,678
17	Տապաստների բլոկների միավորման միաձույլ ե/բետոն B25	մ³	2.31	85,341	197,138
18	Անցումային սալերի տակ կոպճավազային նախապատրաստական շերտ h=10սմ	մ³	10.2	6,998	71,380
19	Անցումային սալերի միաձույլ ե/բետոն B25	մ³	42	124,899	5,245,758
20	Անցումային սալերի ջրամեկուսացման (պաշտպանիչ ամրանավորված բետոն B25՝ h=4սմ) իրականացում h=0,8սմ	մ²	146.9	16,271	2,390,210
21	Հենարանների բնահողի հետ շփվող մակերևույթների քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով	մ²	629.4	1,200	755,280
22	Փոսորակի բնահողի հետլիցք N1 և N2 հենարանների համար (հարթում, ջրում և խտացում՝	մ³	254.7	1,119	285,009
23	Փոսորակի բնահողի հետլիցք ձեռքով N1 և N2 հենարանների համար	մ³	82.3	1,968	161,966
III. Թռիչքային կառուցվածք					
1	Պողպատե տանգենցիալ անշարժ հենարանային մասերի մոնտաժում	հատ	6	63,466	380,796
2	Պողպատե տանգենցիալ շարժական հենարանային մասերի մոնտաժում	հատ	6	63,659	381,954
3	Թռիչքային կառուցվածքի հավաքովի ե/բետոնե կարկասային ամրաններով հեծանների տեղադրում B25	հատ	6	3,957,035	23,742,210
4	Թռիչքային կառուցվածքի հավաքովի ե/բետոնե հեծաններ միմյանց հետ մոնոլիտացման միաձույլ ե/բետոն B25	մ³	4.9	170,423	835,073
5	Թռիչքային կառուցվածքի եզրային հավաքովի ե/բետոնե հեծանների արտաքին եզրերի միաձույլ ե/բետոն	մ³	1.89	137,496	259,867
6	Դեֆորմացիոն կարերի իրականացում	գծմ	41.4	28,600	1,184,040
7	Հարթեցնող շերտ՝ցեմենտային շաղախով h=2-6,8սմ Մ200	մ²	163.9	2,705	443,350
8	Նույնը մայթերի սահմաններում h=3սմ Մ200	մ²	37.8	1,925	72,765
9	Թռիչքային կառուցվածքի ջրամեկուսացման (պաշտպանիչ ամրանավորված բետոն՝ B25 h=4սմ) իրականացում h=0,8սմ	մ²	195.3	16,271	3,177,726
10	Մայթերի տակի հարթեցնող շերտի իրականացում ցեմենտային շաղախով h=2սմ Մ200	մ²	37.8	1,369	51,748
11	Մայթի հավաքովի ե/բետոնե բլոկների տեղադրում	հատ	12	560,629	6,727,548
12	Պողպատե բազրիքների տեղադրում ներկումով	գծմ	36	17,164	617,904
13	Մայթի ավազային ա/բետոն	մ²	27	5,803	156,681

14	Ծածկի ներքին շերտի մանրահատիկ ա/բետոն h=4սմ	մ²	156.5	5,240	820,060
15	Ծածկի վերին շերտի մանրահատիկ ա/բետոն h=3սմ	մ²	163.7	4,011	656,601
16	Ավազակոպճային նախապատրաստում կցորդման անվահրիչների բլոկների տակ h=0,1մ	մ³	0.48	6,998	3,359
17	Կցորդման հավաքովի ե/բետոն անվահրիչների բլոկների տեղադրում B25	հատ	4	136,775	547,100
18	Անվտանգության գոտիների հորիզոնական գծանշում	գծմ	37.4	117	4,376
19	Մայթերի և կցորդման տեղամասերի անվահրիչների ուղղահայաց գծանշում	մ²	36.1	1,132	40,865
20	Նոր ճանապարհային նշանի տեղադրում	հատ	2	36,971	73,942
IV. Թներ (կարգավորիչ պատեր)					
1	Հիմքի կառուցման համար փոսորակի փորում 10₃ -V կարգի բնահողում էքս.-ով հետագա բնահողի տեղափոխում 25մ հեռավորության վրա բուլդոզերով՝ կցորդման հողային պաստառի համար՝ (N1 հենարան)	մ³	20.6	5,420	111,652
2	9դ-V կարգի բնահողի նախապես փխրեցում պայթանցքային լիցքերով h=0,5մ (50%) հետագայում (29%) բնահողի տեղափոխում բուլդոզերով 25մ հեռավորության վրա կցորդման հողային պաստառի համար՝(N1 հենարան)	մ³	40.8	4,404	179,683
3	Փոսորակի վերջնակազմատման հողային աշխատանքներ 9դ-V կարգի բնահողում, ձեռքի կույտավորումով և կրկնակի զցումով՝ (N1 հենարան)	մ³	7.2	31,197	224,618
4	Փոսորակի փորման համար նախապես 20a-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=0,5մ հետագայում (43%) բնահողի տեղափոխում բուլդոզերով 25մ հեռավորության վրա կցորդման հողային պաստառի համար՝(N2 հենարան)	մ³	29.3	7,807	228,745
5	Փոսորակի վերջնակազմատման համար նախապես 20a-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=0,5մ, ձեռքի կույտավորումով և կրկնակի զցումով՝(N2հենարան)	մ³	4.2	32,010	134,442
6	Հիմքերի միաձույլ բետոն B20	մ³	36.38	73,676	2,680,333
7	Իրանների միաձույլ բետոն B20	մ³	47.88	75,977	3,637,779
8	Թների հետ բնահողի հետ շփվող մակերևույթների քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով	մ²	120.1	1,200	144,120
9	N1 և N2 հենարանների մոտ փոսորակների բնահողի հետլիցք բուլդոզերով (հարթում, ջրում և խտացում)՝	մ³	45.6	1,119	51,026
10	N1 և N2 հենարանների մոտ փոսորակների բնահողի հետլիցք ձեռքով (հարթում, ջրում և խտացում)՝	մ³	11.4	1,968	22,435
				Ընդամենը 7.	**99,144,388**
				Ընդհանուրը	***144,782,864***

* միավորի արժեքը ներառում է շահույթը և ԱԱՀ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք.Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900011005767
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք.Մեղրի, Գործարանային 89
«Արդշինբանկ» ՓԲԸ, Մեղրի մասնաճյուղ
Հ/Հ 2470200016540000
ՀՎՀՀ 09700228

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 1.1
« » «հունիսի» 2016թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ N «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/5-2» գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

Մ-2, Երևան - Երասխ - Գորիս - Մեղրի - Իրանի սահման կմ 358 + 025 հատվածում կամուրջի կառուցման աշխատանքների (2016թ. իրականացվելիք)

ՀՀ դրամ

Հ/հ	Աշխատանքների անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի գինը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
1.Հողային աշխատանքներ					
1	10зV կարգի բնահողի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ հեռ. վրա, լիցք	մ^3	60	959	57,540
2	Նույնը 100մ հեռավորության վրա, լիցք	մ^3	164	1711	280,604
3	Ա/բ ծածկի քանդում և տեղափոխում բուլդոզերով 20մ կուտակման նպատակով, բարձում էքս.-ով ա/ի վրա, տեղափոխում լցակույտ 2կմ	մ^3	64	2787	178,368
4	Լիցքի կառուցումը (հարթում,ջրում և խտացում)	մ^3	224	793	177,632
5	9д-V կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով երբ շերտի հզորությունը h=0.5 մ	մ^3	55	5,510	303,050
6	20a-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով երբ շերտի հզորությունը h=0.5մ	մ^3	410	6,740	2,763,400
7	20б-VIII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով, երբ շերտի հզորությունը h=0.5մ	մ^3	260	11,592	3,013,920
8	20a-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ^3	969	2,472	2,395,368
9	20б-VIII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ^3	619	3,194	1,977,086
10	Նախապես փխրեցված 9д-V կարգի բնահողի տեղափոխում բուլդոզերով 50մ հեռ. վրա, Լիցք	մ^3	75	960	72,000
11	Նախապես փխրեցված 9д-V և 20a-VII կարգի բնահողերի մշակում և տեղափոխում բուլդոզերով 100մ հեռ. վրա, լիցք (35մ^3+338մ^3)	մ^3	373	1,711	638,203
12	Նախապես փխրեցված 20a-VII կարգի բնահողի բարձում էքս.-ով ա/ի վրա և տեղափոխում լցակույտ 2կմ	մ^3	831	2,693	2,237,883
13	Նախապես փխրեցված 20б-VIII կարգի բնահողի բարձում էքս.-ով ա/ի վրա և տեղափոխում լցակույտ 2կմ	մ^3	700	2,735	1,914,500
14	Նախապես փխրեցված 20a-VII կարգի բնահողի մշակում և տեղափոխում բուլդոզերով 20մ կուտակման նպատակով բարձում էքս.-ով ա/ի վրա և տեղափոխում լցակույտ 2.0կմ	մ^3	210	3,201	672,210
15	Նույնը 20б-VIII կարգի բնահողում	մ^3	179	3,244	580,676
16	Լիցքի կառուցում (հարթում, ջրում, խտացում)	մ^3	540	562	303,480
				Ընդամենը 1.	**17,565,920**
2. Հողային առուներ					
1	9д-V կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h = 0.5մ	մ^3	5	5,510	27,550
2	20a-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h = 0.5մ	մ^3	13	6,740	87,620
3	20б-VIII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h= 0.5մ	մ^3	20	11,592	231,840

4	Նախապես փխրեցված 9դ-V կարգի բնահողի բարձում էքս.-ով ա/ի վրա և տեղափոխում լցակույտ 1կմ հեռ. վրա	մ³	10	2,209	22,090
5	Նախապես փխրեցված 20a-VII կարգի բնահողի բարձում էքս.-ով ա/ի վրա և տեղափոխում լցակույտ 1կմ հեռ. վրա	մ³	13	2,457	31,941
6	Նախապես փխրեցված 20б-VIII կարգի բնահողի բարձում էքս.-ով ա/ի վրա և տեղափոխում լցակույտ 1կմ հեռ. վրա	մ³	20	2,453	49,060
				Ընդամենը 2.	**450,101**
3.Կամրջային անցում					
I.Նախապատրաստական աշխատանքներ					
1	Շին-մոնտաժային աշխատանքներ իրականացնելու ընթացքում տրանսպորտային միջոցների երթևեկությունը կարգավորող ճան. նշանների պատրաստում և տեղադրում՝ հետագա կազմատումով	հատ	12	39,769	477,228
II. Հենարաններ					
1	Հիմքի կառուցման համար փոսորակի փորում 10з-V կարգի բնահողում էքս.-ով հետագա բնահողի տեղափոխում 25մ հեռավորության վրա բուլդոզերով՝կցորդման հողային պաստառի համար՝ (N1 հենարան)	մ³	62	5,420	336,040
2	9դ-V կարգի բնահողի նախապես փխրեցում պայթանցքային լիցքերով h=0,5մ (50%) հետագայում (46%) բնահողի տեղափոխում բուլդոզերով 25մ հեռավորության վրա կցորդման հողային պաստառի համար՝ (N1 հենարան)	մ³	196.4	2,498	490,607
3	Փոսորակի վերջնակազմատման հողային աշխատանքներ 9դ-V կարգի բնահողում, ձեռքի կույտավորումով և կրկնակի զցումով `(N1 հենարան)	մ³	34.6	31,197	1,079,416
4	Փոսորակի փորման համար նախապես 20a-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=0,5մ հետագայում (46%) տեղափոխում բուլդոզերով 25մ հեռավորության վրա կցորդման հողային պաստառի համար՝ (N2 հենարան)	մ³	275.1	6,441	1,771,919
5	Փոսորակի վերջնակազմատման համար նախապես 20б-VIII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=0,5մ, ձեռքի կույտավորումով և կրկնակի զցումով (N2 հենարան)	մ³	47.7	39,776	1,897,315
6	N1 հենարանի հիմքի միաձույլ բետոն B20, հիմքի ներբանի ամրանային ցանցով	մ³	49.86	101,999	5,085,670
7	N2 հենարանի հիմքի միաձույլ բետոն B20, հիմքի ներբանի ամրանային ցանցով	մ³	43.32	97,772	4,235,483
8	N1 հենարանի իրանի միաձույլ բետոն B20, հիմքի ներբանի ամրանային ցանցով	մ³	106.41	97,931	10,420,838
9	N2 հենարանի իրանի միաձույլ բետոն B20, հիմքի ներբանի ամրանային ցանցով	մ³	79.80	97,922	7,814,176
10	Ֆերմատակերի միաձույլ ե/բետոն B25	մ³	21.9	138,330	3,029,427
11	Պահարանային պատերի միաձույլ ե/բետոն B25	մ³	19.04	156,270	2,975,381
12	Հենարանային պատվանդանների միաձույլ ե/բետոն B25	մ³	1.76	162,044	285,197
13	Ամրանային ձողեր անցումային սալերի ֆիկսացիայի համար	տն	0.0702	947,030	66,482
14	Խճային բարձիկներ տապաստի բլոկների տակ h=0,4 մ	մ³	20.22	8,613	174,155
15	Հավաքովի ե/բետոնե Л-3 տիպի տապաստի բլոկներ B25	հատ	4	370,459	1,481,836
16	Հավաքովի ե/բետոնե Л-5 տիպի տապաստի բլոկներ B25	հատ	2	411,839	823,678
17	Տապաստների բլոկների միավորման միաձույլ ե/բետոն B25	մ³	2.31	85,341	197,138
18	Անցումային սալերի տակ կոպճավազային նախապատրաստական շերտ h=10սմ	մ³	10.2	6,998	71,380
19	Անցումային սալերի միաձույլ ե/բետոն B25	մ³	42	124,899	5,245,758
20	Անցումային սալերի ջրամեկուսացման (պաշտպանիչ ամրանավորված բետոն B25՝h=4սմ) իրականացում h=0,8սմ	մ²	146.9	16,271	2,390,210
21	Հենարանների բնահողի հետ շփվող մակերևույթների քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով	մ²	629.4	1,200	755,280

22	Փոսորակի բնահողի հետլիցք N1 և N2 հենարանների համար (հարթում, ջրում և խտացում՝	մ³	254.7	1,119	285,009
23	Փոսորակի բնահողի հետլիցք ձեռքով N1 և N2 հենարանների համար	մ³	82.3	1,968	161,966
III. Թռիչքային կառուցվածք					
1	Պողպատե տանգենցիալ անշարժ հենարանային մասերի մոնտաժում	հատ	6	63,466	380,796
2	Պողպատե տանգենցիալ շարժական հենարանային մասերի մոնտաժում	հատ	6	63,659	381,954
3	Թռիչքային կառուցվածքի հավաքովի ե/բետոնե կարկասային ամրաններով հեծանների տեղադրում B25	հատ	6	3,957,035	23,742,210
4	Թռիչքային կառուցվածքի հավաքովի ե/բետոնե հեծանները միմյանց հետ մոնոլիտացման միաձույլ ե/բետոն B25	մ³	4.9	170,423	835,073
5	Թռիչքային կառուցվածքի եզրային հավաքովի ե/բետոնե հեծանների արտաքին եզրերի միաձույլ ե/բետոն	մ³	1.89	137,496	259,867
IV. Թներ (կարգավորիչ պատեր)					
1	Հիմքի կառուցման համար փոսորակի փորում 10₃ -V կարգի բնահողում էքս.-ով հետագա բնահողի տեղափոխում 25մ հեռավորության վրա բուլդոզերով՝ կցորդման հողային պաստառի համար՝ (N1 հենարան)	մ³	20.6	5,420	111,652
2	9դ-V կարգի բնահողի նախապես փխրեցում պայթանցքային լիցքերով h=0,5մ (50%) հետագայում (29%) բնահողի տեղափոխում բուլդոզերով 25մ հեռավորության վրա կցորդման հողային պաստառի համար՝ (N1 հենարան)	մ³	40.8	4,404	179,683
3	Փոսորակի վերջնակազմատման հողային աշխատանքներ 9դ-V կարգի բնահողում, ձեռքի կույտավորումով և կրկնակիզցումով՝ (N1 հենարան)	մ³	7.2	31,197	224,618
4	Փոսորակի փորման համար նախապես 20a-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=0,5մ հետագայում (43%) բնահողի տեղափոխում բուլդոզերով 25մ հեռավորության վրա կցորդման հողային պաստառի համար՝ (N2 հենարան)	մ³	29.3	7,807	228,745
5	Փոսորակի վերջնակազմատման համար նախապես 20a- VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=0,5մ, ձեռքի կույտավորումով և կրկնակի զցումով՝(N2 հենարան)	մ³	4.2	32,010	134,442
6	Հիմքերի միաձույլ բետոն B20	մ³	36.38	73,676	2,680,333
7	Իրանների միաձույլ բետոն B20	մ³	16.75	75,977	1,272,615
				Ընդամենը 3.	81,983,577
				Ընդհանուրը	***99,999,598***

* միավորի արժեքը ներառում է շահույթը և ԱԱՀ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք.Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական գանձապետարան
հ/հ 900011005767
ՀԿՀ 02565518

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք.Մեղրի, Գործարանային 89
«Արդշինբանկ» ՓԲԸ, Մեղրի մասնաճյուղ
հ/հ 2470200016540000
ՀԿՀ 09700028

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 2
«21» «հունիսի» 2016թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ N «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/5-2» գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Մ-2, ԵՐԵՎԱՆ-ԵՐԱՍԽ-ԳՈՐԻՍ-ՄԵՂՐԻ-ԻՐԱՆԻ ՍԱՀՄԱՆ ԿՄ 358+025 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՄՈՒՐՋԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 2016թ.-ԻՆ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Հողային աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	01.08.2016թ.
2	Կողային առուներ	15.07.2016	05.08.2016
3	Կամրջային անցում	10.08.2016	30.10.2016
ԸՆԴԱՄԵՆԸ		**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո**	**30.10.2016**

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Մ-2, ԵՐԵՎԱՆ-ԵՐԱՍԽ-ԳՈՐԻՍ-ՄԵՂՐԻ-ԻՐԱՆԻ ՍԱՀՄԱՆ ԿՄ 358+025 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՄՈՒՐՋԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՆԱՑԱԾ ՄԱՍԻ ՀԱՄԱՐ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Իջատեղերի կառուցում	Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից 100 օր հետո	Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից 130 օր հետո
2	Երթևեկելի մաս	Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից 130 օր հետո	Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից 200 օր հետո
3	Անվտանգության էլեմենտներ	Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից 200 օր հետո	Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից 280 օր հետո
4	Կամրջային անցում	Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից	Լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից	Լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց 280 օր հետո

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք.Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900011005767
ՀԿՀՀ 02565518
(մատիաստորություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք.Մեղրի, Գործարանային 89
«Արդշինբանկ» ՓԲԸ, Մեղրի մասնաճյուղ
Հ/Հ 2470200016540000
ՀԿՀՀ 09700028
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 3
«21» «հունիսի» 2016թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ N «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/5-2» գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության 2016թ. պետական բյուջեի հաշվին նախատեսված միջոցներից, ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ 358+025 հատվածում կամուրջի կառուցման (2016թ. իրականացվելիք աշխատանքներ)	-	-	-	-	-	-	79 9158 104	79 9158 104	79 9158 104	99 893 880	99 893 880	99 893 880	**99 893 880**

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք.Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900011005767
ԿՀԿ 02565518

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք.Մեղրի, Գործարանային 89
«Արդշինբանկ» ՓԲԸ, Մեղրի մասնաճյուղ
Հ/Հ 2470200016540000
ՀՎՀՀ 00700028

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 4
«2/» «հունիսի» 2016թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ N «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/5-2» գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » «հունիսի» 2016թ.
թիվ N «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/5-2» ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կապալառուի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/5-2»

ք. Երևան «17» «հունիսի» 2016թ.

«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Գասպարյանի (անձնագիր՝ N AK 0251987, տրված է 04.03.2009թ., 045-ի կողմից), ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ 358+025 հատվածում կամուրջի կառուցման շինարարական աշխատանքների ձեռքբերման «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/5» ծածկագրով բաց ընթացակարգին և պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում, ուստի սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրի՝ Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը, կից ներկայացված վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»:

1.2. Ընկերության կողմից սույն ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու, չկատարելու կամ կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագիրը ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին՝ վճարելու պահանջագրի մեջ նշված գումարը:

1.3. Պահանջագիրը բանկ ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում Պատվիրատուին գումարը բանկից անկախ պատճառներով չփոխանցվելու դեպքում, Պատվիրատուն Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք.Մեղրի, Գործարանային 89

«Արդշինբանկ» ՓԲԸ, Մեղրի մասնաճյուղ
Հ/Հ 2470200016540000
ՀՎՀՀ 09700228

տնօրեն Ա.Գասպարյան
(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝
(ստորագրություն)

Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅԱՆԱԳԻՐ **N280**

"_____" _____ 20___ թ.

Վճարող՝ «Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ ՀՎՀՀ - 09700228	ԴԵԲԵՏ 2470200016540000	ԳՈՒՄԱՐ (ԱՐԺՈՒՅԹԸ) 14 462 981 ՀՀ դրամ
Վճարողի բանկը՝ «Արդշինբանկ» ՓԲԸ, Մեղրի մասնաճյուղ	ԿՐԵԴԻՏ	ԳՈՒՄԱՐ (ԲԱՌԵՐՈՎ) Տասնչորս միլիոն չորս հարյուր վաթսուներկու հազար ինը հարյուր ութսունմեկ ՀՀ դրամ
Շահառու՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՎՀՀ - 02565518		
Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան	հշ.N 900005000758	

Գումարը բառերով՝ Տասնչորս միլիոն չորս հարյուր վաթսուներկու հազար ինը հարյուր ութսունմեկ ՀՀ դրամ

Գնման գործընթացի ծածկագիրը՝ N ՏԻԳ-ԲՔԱՇՁԲ-2016/5

Վճարման նպատակը՝ պայմանագրի ապահովում, տուժանքի մասի համաձայնության՝ N ՏԻԳ-ԲՔԱՇՁԲ-2016/5-2

Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

Կից____ է

Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ Կ.Տ.	Վճարողի ստորագրությունները /_____ /_____ Կ.Տ
Կատարված է շահառուի բանկի կողմից /_____/ <<__>>_____20__թ. Կ.Տ.	Կատարված է վճարողի բանկի կողմից /_____ <<__>>_____20__թ Կ.Տ